

Գ Ի Ն Ա Ր Բ Ո Ւ Ք

—00—

Ո՛ր, տո՛ւր ինձ մի բաժակ գինի,
 Ուր թափել է արեւն իր հուր,
 Նախ քան օրը գիշեր լինի —
 Ե՛կ, սիրուհի՛ս, բաժակը տուր:

**

Նուր պրիսմակովը բաժակի՛
 Գեղեցկութեանդ ցոլքը դիտեմ,
 Նրմանի դէ՛մքդ հրեշտակի,
 Սատանայ ես թէեւ, գիտեմ:

**

Ե՛կ սիրուհիս, լեցո՛ւր բաժակն,
 Շրթներիդ վարդն օժէ ցողով,
 Շրթունքներիդ համբոյրի ակն
 Թող փաղցրանայ նաեւ գինով ...

**

Համբոյրդ լինի թող գինեհամ,
 Արժանանամ մենք գեհեներն ...
 Բայց համբոյրովդ թէ չարքենամ՝
 Զըմեղադրես ազնիւ գինին:

ԲԱՆԱՍՏԵՂԺԻ ԳԵՐԵԶՄԱՆԻՆ

Ա Ռ Զ Ե Ի

—00—

Անձրեւն իջնում է, հեղուկ երգի պէս,
 Դուռը դամբանիդ բախելով ի գո՛ւր.
 Սակայն յուսալով գուցէ ի՛նձ ըսես —
 Ահա՛ եկել եմ, երկիւղած ու լուռ:

**

Վարպե՛տ, այս ե՛ս եմ, անանուն մի *ես*,
 Հոգիս վանառած գրգիռ մէկ էջին ...
 Դո՛ւ, որ նիրհում ես, քաց աչքերդ ու
 տե՛ս —
 Քանզի մարմնացած քո երգն եմ վեր-
 ջին ...

**

Իջնում է անձրեւն այտերիս վրայ,
 Արցո՞ւնք է արդեօք թէ միայն անձրեւ —
 Անձրեւ կամ արցունք նոյնըն է հիմա, —
 Նիրհում է մահը այս փարի ներքեւ ...

**

Վարպե՛տ, այս ե՛ս եմ, անանուն մի *ես*,
 — Եկած սեւ կառովդ արձան կերտելու

Ա՛հ, ես անփուն եմ, իսկ դու նիրհում
 ես,

Վարպե՛տ, եկել եմ վիճակ փոխելու...:

Յ. ԿՈՍՏԱՆԴԵԱՆ

Փարիզ, 1933